


ՎԵՐՁԻՆ ՄՈՒԽԼԱՆՆԵՐ



Exported from Wikisource on 08/11/20

Վերջին մոհիկաններ

Նար-Դոս

[233]

Իմ ընթերցողներին

Ես ստացա հետևյալ նամակը և նամակի հետ առանձին տետրակի մեջ մի գրություն, որը հրատարակության եմ տալիս ստորև:

Ես ձեր «Նեղ օրերից մեկը» պատմվածքի հերոսն եմ— Պատրիկյանը: Թեև իսկական ազգանունս Պատրիկյան չէ, բայց այդ միևնույն է. բող ձեզ և ընթերցողների համար Պատրիկյան էլ մնամ. իսկական ազգանունս հայտնելով չի փոխվելու էությունը, որի դեմ առարկելիք չունեմ:

«Նեղ օրերից մեկը» լույս տեսնելուց հետո անցել է մոտ երեսուն տարի, և դեռ չգիտեմ երբեկցե հետաքրքրվե՞լ եք իմանալու, թե հետագայում ինչ եղան, ինչ վիճակ ունեցան ձեր այդ պատմվածքի գլխավոր պերսոնաժները, այսինքն— ես, տանտես, խմբագրության քարտուղարը և արքունական թատրոնների երգիչ Զափիհանը կամ Ժապիհնովը, ինչպես անվանվում էր այն ժամանակ աֆիշների մեջ: Եթե հետաքրքրվել եք և շեք իմացել, ես կարող եմ պատմել:

Կակսեմ ինձնից:

Մի երկու լդարիկ գրույկ հրատարակելուց հետո, որի վրա զուր տեղը ծախսել էի ուսուցչությանս ժամանակ խնայած կոպեկներս, ես մի անգամ առմիշտ թողի գրող լինելու մարմար, այրեցի հետագա բոլոր գրվածքներս և գալիցինյան ռեժիմից հետո, եթե վերատին բացվեցին մեր դպրոցները, նորից մտա ուսուցչական ասպարեզ: Այն խոնավ ու մութ սենյակը, որի վարձը նեղ օրերիս հազիվ էի կարողանում վճարել, թողի և անցա նույն տան բակում ազատված երկու լուսավոր սենյակ, ամուսնացա, օրինավոր տուն ու տեղ դրի, չորս զավակներ ունեցա— եթեք տղա, մի աղջիկ: Տղաներից ամենամեծը թունդ բոլշևիկ դուրս եկավ և զոհվեց մայիսյան ապստամբության ժամանակ: Նրանից փոքրը նույնպես բոլշևիկ-կոմունիստ է և ներկայումս հրահանգիչ է գավառում: Այնուհետև՝ աղջիկս

մեջությունի է, իսկ փոքր տղաս սովորում է բանֆակում և խոստանում է ավելի քունդ բոլշևիկ լինել, քան իր ավագ եղբայրները: Ներկայումս ես արդեն մոտ վարսուն տարեկան ծերունի եմ: Թողել եմ ուսուցչությունը: Ստանում եմ կենսարոշակ: Անցյալ տարվանից կնոջ հետ մշտապես տեղափոխվել եմ իմ հայրենի գյուղաքաղաքը, ուր պաշտոնավարում է աղջիկս, և ապրում եմ նրա մոտ հանգիստ ու ապահով, միանգամայն մոռանալով իմ նեղ օրերը, որոնցից մեկը նկարագրել եք դուք ձեր պատմվածքի մեջ:

Խմբագրության քարտուղարություն:

Մրա կյանքն արդեն մի կատարյալ էշի մարտիրոսություն էր: Ֆանատիկոսի մոլեուանդությամբ նվիրված լինելով թերթին, տարեցտարի և օրը օրին մեն-մենակ լցնելով թերթը, ցերեկը խմբագրատանը և գիշերները տպարանում անցկացնելով, այնքան չէր ստանում, որ գոնե մի տաք կերակուր ուտեր և ձմեռը տաք հազնվեր: Վերջը թքեց թերթի վրա էլ, ամեն բանի վրա էլ, զնաց Էջմիածին, կուսակրոն ձեռնադրվեց, վարդապետ դառավ, հետո ծայրագույն վարդապետ, գրում էր «Արարատ»-ում, քիչ մնաց եպիսկոպոս ու թեմակալ դառնար, փորը մի քիչ հաստացրեց և մեռավ անհայտ ու անպտուի:

Երգիչ Զափինյանը:

Վերջը բանից երևաց, որ սա փրուռույց հոչակի տեր և անտաղանդ մեկն է եղել, զուրկ նույնիսկ լսողությունից: Ինչպես որ արագ բարձրացել էր արքունական քատրոնների քեմերը իր հիրավի որ հուժկու ձայնի շնորհիվ, այնպես էլ և է՛լ ավելի արագ ցած գլորվեց այնտեղից: Զափինյանը չի մոռացել իր նախկին տիրացությունը և երեմն-երբեմն իր բարեկամ այս կամ այն հանգուցյալի թաղման ժամանակ իր գոմշի ձայնով վեր է քաշում «Ի վերին Երուսաղեմ»-ը ի պատիվ հանգուցյալի հարազատների, որոնք այդ բանից զգացված՝ սկսում են է՛լ ավելի մեծ քափով, ճիշ ու ծղրտոցով (կանայք, իհարկե) վայ տալ իրենց թանկագին կորուստը: Ցիլինդրը, կարմիր փողկապը իր խոշոր աղամանդով և բարձր կրունկներով փայլուն կոշիկները վաղուց, շատ վաղուց հրաժեշտ են տվել նրան: Բայց, չնայելով իլլահիտ վարսունիինգամյա հասակին, դեռևս շատ ժիր է, և այժմ դուք կտեսնեք նրան շոֆերական մի կեպի սափրած գլխին, մի շատ հասարակ բլուզ հազին, կարկատած կոշիկներով այս կամ այն կոռպերատիվ խանութը վագելիս, որ մի բանի կիլո կարտոֆիլ տանի տուն քարանե տուպրակով, որը շարունակ ման է ածում հետը համենայն դեպս: Ապրում է, կարծեմ, երգեցողության մասնավոր դասերով:

Տանտե՞րս:

Գրությանս նպատակն իսկապես սա է: Ես ուզում եմ առանձնապես ծանրանալ սրա վրա և ձեր ուշադրությունն էլ հատկապես սրա վրա եմ ուզում հրավիրել: Սա

նախանցյալ տարի մեռավ: Արդեն մոտ յոթանասուն տարեկան ծերունի էր: Սրա մահով գերեզման իշավ մեր փառազուրկ քուրժուազիայի վերջին տիպիկ ներկայացուցիչներից մեկը: Սրա կյանքի թոռուցիկ նկարագիրը հեղափոխությունից առաջ և հետո՝ թերևս մի նոր պատմվածքի կամ վեպի նյութ տա ձեզ: Այդ սիստեմատիկ նկարագիրը դուք կգտնեք նամակիս հետ ձեզ ուղարկված տետրակիս մեջ:

Ձեր Պատրիկյան

About this digital edition

This e-book comes from the online library [Wikisource](#)^[1]. This multilingual digital library, built by volunteers, is committed to developing a free accessible collection of publications of every kind: novels, poems, magazines, letters...

We distribute our books for free, starting from works not copyrighted or published under a free license. You are free to use our e-books for any purpose (including commercial exploitation), under the terms of the [Creative Commons Attribution-ShareAlike 3.0 Unported](#)^[2] license or, at your choice, those of the [GNU FDL](#)^[3].

Wikisource is constantly looking for new members. During the realization of this book, it's possible that we made some errors. You can report them at [this page](#)^[4].

The following users contributed to this book:

- Voskanyan
- GeoO

-
1. [↑ http://wikisource.org](http://wikisource.org)
 2. [↑ http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0](http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0)
 3. [↑ http://www.gnu.org/copyleft/fdl.html](http://www.gnu.org/copyleft/fdl.html)
 4. [↑ http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium](http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium)